Խանջյան համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2011 թվականի առաջին կիսամյակի գործունեության վերաբերյալ

«14» Հուլիս 2011թ. Գ.Խանջյան

Հարգելի Խանջյան համայնքի բնակիչներ, այսօրվա ժողովում ես Ձեզ կներկայացնեմ 2011 թվականի առաջին կիսամյակում կատարված աշխատանքների, բյուջեի կատարողականի,առկա հիմնախնդիրների մասին :Վերջում ակնկալում եմ, որ կծավալվի ակտիվ քննարկում,մտքերի փոխանակում,հարց ու պատասխաններ,առաջարկություններ:
Գյուղատնտեսության համար գարնան անբարենպաստ եղանակը ազդեց բնակչության սպասվելիք եկամուտների վրա, որը անդրադարձավ բյուջեյի եկամուտների հավաքագրման աշխատանքների գործընթացին: Սակայն մենք կաշխատենք հնարավորինս ապահովել 2011 թվականի բյուջեյում նախատեսված սեփական եկամուտների հավաքագրման բարձր տոկոս:

Խանջյան համայնքի 2011 թվականի գյուղապետարանի բյուջեն մուտքային և ծախսային մասով կազմում է առ 01.07.2011թ. 27 934, 5 հազար դրամ:
Առկա բյուջեով նախատեսված է լուծել Խանջյան համայնքում ծառացած հիմնախնդիրները:
Արմավիրի մարզի Խանջյան գյուղապետարանի բյուջեն մուտքային և ծախսային մասով ունի հետևյալ տեսքը

մուտքային մաս

	նախատեսված	կատարված	տոկոս
1. հողի հարկ	8907,7 հ.դ.	1366.0 հ.դ.	15%
2. գույքահարկ	1820,0 հ.դ	539.5հ.դ.	29.6%
3. տեղական տուրք	100,0 հ.դ.	9.0 հ.դ	9%
4. ոչ հարկային եկամուտ	500.0հ.դ .		
ա) հողի վարձավճար		30.0հ.դ.	0.06%
5. դոտացիա	16606.8 հ.դ.	8303.4 հ.դ.	50%
6. տարեվերջին ազատ մնացորդ	271.9 հ.դ.		
ա) ֆոնդային բյուջե	26.0 հ.դ.		
բ) վարչական բյուջե	245.9 հ.դ.		

Բյուջեյի եկամուտների ցածր տոկոսը պայմանավարված է գարնան անբարենպաստ պայմաններից:

ծախսային մաս

	վարչական	ֆոնդային մաս
1.տեղական ինքնակառավարում	16745,9 հ.դ	
2.գրադարան	500.0 հ.դ.	
3.կուլտուրայի տուն	955,5հ.դ.	
4.կրթություն	533,0 հ.դ.	
5.այլ մշակույթային կազմակերպություն	500,0 հ.դ.	
6.շրջակա միջավայրի պաշտպանություն	960,0 հ.դ.	
7.սոցիալական պաշտպանություն	2000,0 հ.դ.	
8.պահուստային ֆոնդ	28,0 հ.դ.	
9.տնտեսական հարաբերություններ	2000.0 հ.դ.	
10.առողջապահություն	1500.0 հ.դ.	
11.Ոչ ֆինանսական ակտիվների գշով ծախսեր		1626.0 հ.դ.

Խանջյան համայնքում կազմակերպվել է մի շարք միջոցառումներ՝

1.Կատարվել է փողոցների և գերզմանատան միջավայրի սան. մաքրում, ինչպես նաև սաղավատար առուների մաքրում:
2.Դաշտամջյան և գյուղի փողոցների մասնակի վերանորեգման աշխատանքներ:

Ռազմավարական կտրվացքով Խանջյան համայնքի սոցիալ տնտեսական վիճակը բարելավելու համար ընտրվել է հետևյալ ուղվածությունները՝

1.Բուժ կետի շենքային պայմանների բարելավում:
2.Դպրոցի և մանկապարտեզի շենքերիերի վերանորոգում:
3.Համայնքային ճանապարհների բարեկարգում:

Սակայն համայնքում առկա են դեռ լուծում պահանջող հիմնախնդիրներ:

Համայնքի ղեկավար՝ Ս.Ավագյան